ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ, Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գեվորգ եպս. Սերայդարյանի, կատարվեց Միսակ սրկ. Սարիբեկյանի և Սահակ սրկ. Կյուրեղյանի քահանայական ձեռնադրությունը:

Դեկտեմբերի 14-ին Երևանի Ս. Զորավոր եկեղեցում, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվեց «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը, ըստ ձեռնադրության Մաշտոցի՝ խարտավիլակությամբ Տ. Արամ ավագ քհն. Բոյաջյանի: Արժանապատիվ տեր հայրը վկայեց նորընծաների հոգեկան ու մտավոր պատրաստվածության մասին՝ արժանի քահանայական ձեռնադրության:

Հաջորդ օրը, դեկտեմբերի 15-ին, Ս. Սարգիս եկեղեցում, հընթացս ս. պատարագի, կատարվեց նորընծաների ձեռնադրությունը:

Պատարագիչ Տ. Գևորգ սրբազանը մեռոնով օծեց նորընծաների ճակատն ու ձեռքերը՝ վերակոչելով Միսակ սրկ. Սարիբեկյանին՝ Տ. Մխիթար քահանա, իսկ Սահակ սրկ. Կյուրեղյանին՝ Տ. Միքայել քահանա:

«Ողջոյն»-ի պահին Տ. Գևորգ սրբազանը ողջագուրվեց և շնորհավորեց նորընծաներին. նրան հետևեցին բոլոր «քահանայք և սարկաւագք»:

Ապա պատարագիչ սրբազանը արտասանեց ոգեշունչ քարոզ՝ վեր հանելով Հայ Առաքելական Եկեղեցու հոգևորականաց դասի նվիրվածությունը իր ժողովրդին ու հայրենիքին, և մաղթեց նորընծաներին՝ պատվով շարունակելու նախնյաց սուրբ ավանդույթները:

Ս. պատարագին ներկա էր Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը:

Դեկտեմբերի 16-ին նորընծաները, Տ. Գեվորգ եպս. Սերայդարյանի գլխավորությամբ, առաջնորդվեցին Վեհարան, որտեղ Նորին Սրբությունը գոհունակությամբ և հայրական սիրով ընդունեց նրանց, մաղթեց, որ լինեն իրենց կոչմանը նվիրված և չթերանան ծառայելու Հայ Եկեղեցուն և հայ ժողովրդին:

Նորընծաները իրենց ավանդական-օրինական «քառասունքը» կանցկացնեն Մայր Աթոռի խաղաղ մթնոլորտում:

Տ. ՄԽԻԹԱՐ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Ծնվել է 1960 թ. մայիսի 11-ին, Էջմիածնի շրջանի Ներքին Զեյվա գյուղում: Ավանի անունն է Միսակ:

1977 թվականին ավարտել է ծննդավայրի միջնակարգ դպրոցը:

1978 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1979—1981 թթ. եղել է զինվորական ծառայության մեջ, որից հետո շարունակել է իր ուսումը հոգևոր ճեմարանում:

1984 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնի օրը, Մայր Աթոռում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի:

1985 թ. Տ. Մխիթար քահանան, ավարտելով հոգևոր ճեմարանի լրիվ դասընթացը, ծառայության է անցել Խորվիրապի վանքում:

Տ. ՄԻՔԱՅԵԼ ՔԱՀԱՆԱ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

Ծնվել է 1940 թ. ապրիլի 18-ին, Կիպրոսի մայրաքաղաք Նիկոզիայում: Ավազանի անունն է Սահակ:

Նախակրթարանն ավարտելուց հետո, Տ. Միքայել քահանան ուսումնական երկու տարեշրջան սովորել է Կիլիկիայի Կաթողիկոսության Անթիլիասի դպրեվանքում:

Այնուհետև ընդունվել և ավարտել է Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատության մանկավարժական բաժինը, որից հետո աշխատանքի է անցել նույն տեղում որպես ուսուցիչ:

1962 թ. հայրենադարձվել է Մայր Հայաստան և բնակություն հաստատել Լենինական քաղաքում:

Տ. Միքայել քահանան հեռակա կարգով ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի անգլերեն լեզվի բաժինը:

Տ Միքայել քահանան երկար տարիներ անգլերեն լեզվի ուսուցիչ է եղել Լենինականի դպրոցներում:

1984 թվականից մասնակցել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի դասընթացներին, որպես ազատ ունկնդիր:

1985 թ. դեկտեմբերի 8-ին Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի կողմից ստացել է սարկավագական աստիճան :

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը այս ուրախ առիթով շնորհավորում է նորընծաներին, ցանկանում նրանց հաջողություն՝ իրենց պաշտոնի ու ծառայության մեջ՝ ի պայծառություն Մայր Աթոռի և մեր Եկեղեցու, ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի: